



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 21 անդամներ:

Բացակա էին՝ Գայանե Ահարոնյանը, Կարեն Արամայիսյանը, Լուսինե Խաչատրյանը, Նորայր Հակոբյանը, Մելիք Նազարյանը, Էլմիրա Ոսկանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Քոչար Խաչատրյան, Նորայր Մովսիսյան, Արմինե Կոստանյան, Տիգրան Բաբախանյան, Արմինա Մելոյան, Գեվորգ Կոստանյան, Մանվել Առաքելյան, Անգելինա Խաչատրյան, Հասմիկ Ավետիսյան, Զորիկ Գրիգորյան, Լուսինե Աստաբաջյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Համբարձումյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Քոչար Խաչատրյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՔՈՉԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 11-ի հերթական նիստի օրակարգը.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄՍՎԱ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 334-Ն ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ 1-ԻՆ, 2-ՐԴ, 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱԾՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱԾՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԲԱԾԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 242-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 272-Ա ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ, 4-ՐԴ, 5-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀԱՅԿ ՌԱԶՄԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

9. ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՐԵՆ ԳԻԳՈՒՇԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

10. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՐԱՏԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

11. ԻԶԱԲԵԼԼԱ ՇԻՐԱԶՆԻԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 248-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 167-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

15. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ <<ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

16. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՅՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18. ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՅՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

19. ՍԱՐԳԻՍ ՍԱՄՎԵԼԻ ԲԱԴԱՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

20. ՍԱՆԱՍԱՐ ՍԵՅՐԱՆԻ ԽԱԶԱՏՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21. ԱՐՏԱԿ ԱԼԲԵՐՏԻ ԻՍՐԱԵԼՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՆԵՐԱՌՈՂ ԱՐԱՐԱՏ-2 ՀԱՄԱԿՅՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՏՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԸ ՆԵՐԱՌՈՂ ԱՐԱՐԱՏ-1 ՀԱՄԱԿՅՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՏՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ՆԵՐԱՌՈՂ ԱՐԱՐԱՏ-2 ՀԱՄԱԿՅՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ

ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԸ ՆԵՐԱԴՈՂ ԱՐԱՐԱՏ-1 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26. ՓՈՂՈՑԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

27. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 274-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, 77-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 13-ի N146-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից անցկացված գույքագրման արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական և շրջանառու միջոցների 2023 թվականի գույքագրման արդյունքները՝ համաձայն 27 բնակավայրերում կատարված գույքագրման արդյունքների վերաբերյալ կցված N գ-25 տեղեկագրերի:

2. Հաստատել համայնքապետարանի գույքացուցակում հաշվառված, սակայն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից փաստացի օգտագործվող գույքերի ցանկը՝ ՀՈԱԿ-ներին անհատույց, անժամկետ իրավունքով տրամադրելու վերաբերյալ՝ համաձայն հավելված 1-ի, 2-ի և 3-ի:

3. Հաստատել համայնքապետարանի գույքացուցակում հաշվառված, սակայն համայնքում գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների

կողմից փաստացի օգտագործվող գույքերի ցանկը՝ ՊՈԱԿ-ներին անհատույց, անժամկետ իրավունքով տրամադրելու վերաբերյալ՝ համաձայն հավելված 4-ի:

4. Հաստատել գույքագրման արդյունքներով դուրս գրման ենթակա գույքերի ցանկը համաձայն հավելված 5-ի:

5. Գույքացուցակներից գույքի փոխանցումը համապատասխան կազմակերպություններին ավարտելուց և խոտանող հանձնաժողովի կողմից խոտանման ենթակա գույքերը խոտանելուց հետո հաշվապահական փաստաթղթերում կատարել համապատասխան ձևակերպումներ:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 275-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄՍԿԱ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեի ինն ամսվա կատարման արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ (հաղորդումը կցվում է) **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Ընդունել ի գիտություն Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեի ինն ամսվա կատարման արդյունքների վերաբերյալ հաղորդումը՝
ա/ եկամուտների կատարման գծով՝ համաձայն հավելված 1-ի:
բ/ ծախսերի կատարման գծով՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 276-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 334-Ն ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ 1-ԻՆ, 2-ՐԴ, 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 334-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածները կցվում են/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 277-Ն/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԿՈՂՄԻՑ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ֆինանսական բաժնի պետի զեկույցը (զեկույցը կցվում է)՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել 2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2024 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ձեռք բերված հիմնական միջոցների հաշվառումը և բաշխումը գույքային հաշվառման փաստաթղթերում՝ համաձայն հավելված 1-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշումն ընդունելուն հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 278-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

**ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 242-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝**

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 242-Ա որոշումը շարադրել նոր խմբագրությամբ.

<<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 5 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԱՆՈՐՈՇ ԺԱՄԿԵՏՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածի 2-րդ մասով **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝**

1.Թույլատրել մեկ տարվա ընթացքում ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող՝ ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնք, քաղաք Մասիս, Մ. Հերացու փողոց 5 հասցեում գտնվող շենքը, (սեփականության վկայական 03102023-03-0098, կադաստրային ծածկագիրը՝ 03-003-0107-0111-001, տեսակը՝ մանկապարտեզ, մակերեսը՝ 2488.1քմ) անհատույց անորոշ ժամկետով օգտագործման իրավունքով տրամադրել <<ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Մասիս քաղաքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 279-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N272-Ա ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ, 4-ՐԴ,
5-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ

հողվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 1-ի թիվ 201-Ն որոշման 5-րդ հավելվածի 20-րդ կետով, հիմք ընդունելով Մասիս համայնքի ղեկավարի պարտականությունները կատարողի առաջարկը և Մասիսի համայնքապետարանի կրթության, սպորտի, մշակույթի, երիտասարդության և առողջապահության բաժնի պետ՝ Տիգրան Բաբախանյանի 03.10.2024 թվականի թիվ 16458 գեկուցագիրը **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝**

1. Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 12-ի N 272-Ա որոշման 3-րդ, 4-րդ, 5-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածները կցվում են/:

2. Սույն որոշման կից 3-րդ, 4-րդ, 5-րդ հավելվածները կիրառել 2024 թվականի սեպտեմբերի 1-ից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 280-Ա/

Լսեցին

**ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ
ՀԱՅԿ ՌԱԶՄԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Հայկ Վարդանյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ, Մասիս համայնք, ք. Մասիս, Գ. Նժդեհի փողոց 32/17 հասցեում գտնվող շինությունները՝ օժանդակ շինություններ և ծածկ, ընդհանուր 88,4քմ արտաքին մակերեսով, և սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.05719 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասը (ծածկագիր՝ 03-003-0138-0441) ուղղակի վաճառքով օտարել բնակիչ՝ Հայկ Ռազմիկի Վարդանյանին:

2. Շինությունների ուղղակի վաճառքի գինը կազմում է 348120 (երեք հարյուր քառասունութ հազար հարյուր քսան) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Շինություններով զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 2540266 (երկու միլիոն հինգ հարյուր քառասուն հազար երկու հարյուր վաթսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Սահմանված չափերով ձևավորված վաճառքի գնին հավելվում են միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքի պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 26000 (քսանվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ վճարման անդորրագրերի հիման վրա:

5. Գույքն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-8

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 281-Ա/

Լսեցին

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՐԵՆ ԳԻԳՈՒՇԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Կարեն Ասլանյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ, Մասիս համայնք, գյուղ Սայաթ Նովա, Րաֆֆու փողոց 2/1 հասցեում գտնվող շինությունը՝ առևտրի սրահ, ընդհանուր 3,91քմ արտաքին մակերեսով, և սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.00118 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության հողամասը (ծածկագիր՝ 03-082-0023-0073) ուղղակի վաճառքով օտարել բնակիչ՝ Կարեն Գիգուշի Ասլանյանին:

2.Շինությունների ուղղակի վաճառքի գինը կազմում է 42545 (քառասուներկու հազար հինգ հարյուր քառասունհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3.Շինություններով զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 14408 (տասնչորս հազար չորս հարյուր ութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Սահմանված չափերով ձևավորված վաճառքի գնին հավելվում են միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքի պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 26000 (քսանվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ վճարման անդորրագրերի հիման վրա:

5. Գույքն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 282-Ա/

Լսեցին

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԱՐԱՏԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՌԻՂՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հովհաննես Նազարյանի դիմումը /մտից՝ 19.04.2024թ. թիվ 5821 /, **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնք, ք.Մասիս, Նոր թաղամաս, 29/12 հասցեում 0,002 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը /ծածկագիր՝ 03-003-0138-0084, սեփականության իրավունքի վկայական N 2042873/, որը ծանրաբեռնված է Հովհաննես Արարատի Նազարյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակով /ծածկագիր՝ 03-003-0138-0084-001/ և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում օտարել Հովհաննես Արարատի Նազարյանին:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 88840 ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 4442 Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-18 Դեմ-1 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 283-Ա/

Լսեցին

ԻԶԱԲԵԼԼԱ ՇԻՐԱԶՆԻԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

**ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ
ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Իզաբելլա Ստեփանյանի լիազորած անձ Մանե Խաչատրյանի դիմումը /մտից՝ 19.08.2024թ. թիվ 11286/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ Մասիս համայնք, ք. Մասիս, 3-րդ թաղամաս թիվ 2/26 հասցեում գտնվող 0.0041 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը /ծածկագիր՝ 03-003-0109-0058, իրավունքի վկայական N 19082024-03-0016/, որը ծանրաբեռնված է Իզաբելլա Շիրազնիկի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակով /ծածկագիր՝ 03-003-0109-0058-0001/ և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում օտարել Իզաբելլա Շիրազնիկի Ստեփանյանին:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 280250 /երկու հարյուր ութսուն հազար երկու հարյուր հիսուն/ Հայաստանի Հանրապետության դրամ, 1 քմ-ի արժեքը 6835 Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-15 Դեմ-5 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 284-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 248-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 12-ի << ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՎԱԾԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 248-Ա որոշման 1-ին կետի <<4>> ենթակետում գրառված „3756,, թիվը փոխարինել „2817,, թվով :

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 285-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 167-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ **Հայաստանի
Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 10-ի << ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ
<<Ա.Ս.Թ. ՌԵՍՈՒՐՍ>> ԲԲԸ-ԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ >> N 167-Ա որոշման 1-ին կետում գրառված „0,06801 հա բնակավայրերի
հասարակական կառուցապատման,, բառերը և թվերը փոխարինել „0,06802
հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական ,
բնակավայրերի նշանակության, արդյունաբերական օբյեկտների, հասարակական
կառուցապատման,, թվերով և բառերով , „ 03-003-0424-0273 ,, թվերը փոխարինել ,,
03-003-0424-0278,, թվերով :

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 286-Ա/

Լսեցին

**ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԸ ՍՈՒՍԱՆՆԱ ԳԵՎՈՐԳԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի
Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, հիմք ընդունելով
Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-
Ն որոշման պահանջները և հաշվի առնելով Սուսաննա Եղիազարյանի դիմումը /մտից՝
26.08.2024թ. թիվ 11662/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի
մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. << Արարատի մարզ Մասիս համայնք ք. Մասիս Երևանյան փողոց 54/3
հողամաս հասցեում 0,0026 հա բնակավայրերի հասարակական
կառուցապատման հողամասը /ծածկագիր՝ 03-003-0085-0086,
սեփականության իրավունքի վկայական N 06062024-03-0036/, որը սահմանակից
է Սուսաննա Գևորգի Եղիազարյանին սեփականության իրավունքով

պատկանող /ծածկագիր՝ 03-003-0085-0043/ հողամասին և որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում օտարել Սուսաննա Գևորգի Եղիազարյանին:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 356000 /երեք հարյուր հիսունվեց հազար / Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-19 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 287-Ա/

Լսեցին

**ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԸ <<ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջները և հաշվի առնելով <<ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ Արտակ Մարտիրոսյանի դիմումը /մտից՝ 21.08.2024թ. թիվ 11450/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. << Արարատի մարզ Մասիս համայնք Մասիս քաղաք Հրանտ Վարդանյան փողոց 4/6 հասցեում գտնվող 0,932 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողամասը, որը սահմանակից է <<ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ըկերությանը սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր՝ 03-003-0296-0507/ հողամասին և որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում օտարել <<ԳՐԱՆԴ ՄԱՍՏԵՐ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 11400000 /տասնմեկ միլիոն չորս հարյուր հազար / Հայաստանի Հանրապետության դրամ, 1 քմ-ի արժեքը 1221 դրամ:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 288-Ա/

Լսեցին

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ
ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, „Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում նշված հողամասերը տրամադրել վարձակալության մրցութային կարգով.

<<1>> Մասիս համայնքի Նիզամի բնակավայրում գտնվող 03-064-0140-0017 կադաստրային ծածկագրով, 0.04185 հա գյուղատնտեսական նպատակային վաելահող հողատեսքի հողամասը /վկայական N 03072024-03-0120/, մրցույթի մեկնարկային գին սահմանել 50000 /հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ,

<<2>> Մասիս համայնքի Հայանիստ բնակավայրի Գետաշեն թաղամասի 4-րդ փողոց 32 հողամաս հասցեում գտնվող 03-052-0015-0038 կադաստրային ծածկագրով, 0.23979 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը /վկայական N 07052024-03-0066/, մրցույթի մեկնարկային գին սահմանել 100000 /հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ,

<<3>> Մասիս համայնքի Մասիս քաղաք 3-րդ թաղամաս 15/21 հողամաս հասցեում գտնվող 03-003-0803-0002, 03-003-0073-0148 կադաստրային ծածկագրերով, 0.01793 հա , 0.00394 հա բնակավայրերի նպատակային, խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /վկայական N 16042014-03-0040/, մրցույթի մեկնարկային գին սահմանել 40000 /քառասուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ,

Կողմ-20 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 289-Ա/

Լսեցին

**ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում նշված հողամասերն օտարել աճուրդ վաճառքի միջոցով.

« 1» Մասիս համայնքի Մարմարաշեն բնակավայրում գտնվող 03-058-0230-0016 կադաստրային ծածկագրով, 19.61084 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող գործառնական նշանակության հողամասը /վկայական N 30092024-03-0007/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 19600000 /հազար / Հայաստանի Հանրապետության դրամ:

« 2» Մասիս համայնքի Մարմարաշեն բնակավայրում գտնվող 03-058-0230-0015 կադաստրային ծածկագրով, 20 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող գործառնական նշանակության հողամասը /վկայական N 30092024-03-0015/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 19900000 /տասնինը միլիոն ինը հարյուր հազար / Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-18 Դեմ-0 Ձեռնպահ-3

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 290-Ա/

Լսեցին

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԻՆԱ ՄԵԼՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

